ուսուցիչ-ուսուցչուհիներ։ Դեռ գիւղացիութիւնը նոր գիտակցութեան է գալիս, դեռ նոր է սկսել համոզմունքով համակրել դպրոցին։

Ամբողջ Փէրիայի բազմաթիւ հայ գիւղերում երեք դպրոց եմ տեսել. Նամակերտում՝ «Յովնանեան», Բոլորանում՝ «Հայրիկեան», Սանգիբարանում՝ «Պօղոս Անդրէասեան» երկսեռ դպրոցները, որոնք քիչ թէ շատ կանոնաւոր են. այդ դպրոցներից Նամակերտինը պահում է Տ. Վառվառէ Քանանեանը։

Ընդհանրապէս Փէրիայի կրթական գործը կաղում է երկու պատճառով.— ա. որ գիւղերում ինտելիգէնտ ուժեր չկան. բ. չկայ ընդհանուր կրթական կազմակերպութիւն և վարչութիւն։

Հիւանդութիւն և բժշկութիւն։ Այս տեսակէտից պատկերը դարձեալ աննախանձելի է. գիւղացիների բժշկական գործը գտնւում է ամենաթշւառ վիճակում. բաւական է ասել, որ ամբողջ Փէրիան մինչև իսկ չունի յատուկ գաւառային բժիշկ, չունի մասնաւոր դեղատուն։ Գիւղացիք ասես ամենևին հասկացողութիւն չունեն մաքրութեան և հասարակ առողջապահիկ պայմանների մասին. մարմնի, շորերի, բնակարանի մաքրութիւնը նրանցից մեծ մասը, դժբախտաբար միանգամայն աւելորդ է համարում և կան տեղեր, որտեղ կեղտը, անմաքրութիւնը առասպելական է. ամենայն կողմ անմաքրութիւն, կեղտոտութիւն, ոչ մի առողջապահական պայման, ոչ մի զգուշութիւն. հէնց այդ է գլխաւոր պատճառը, որ շատ հիւանդութիւններ են յառաջ գալիս ու տարածւում։ Յաճախ մարդ պատահում է այնպիսի տների, որոնց անդամների մեծամասնութիւնն աչքացաւով կամ տենդով են բռնուած. իսկ հիւանդանալուց բժշկական օգնութեան մասին համարեա թէ չեն էլ մտածում և դժբախտութիւնն այն է, որ այդպիսի երևոյթներ նրանք վերագրում են Աստծուն, համարելով այդ մի տեսակ պատիժ, և որը հետևանք է տիրապետող տգիտութեանը։ Բնական է, որ